

միշին այս խօսքերէն կը հասկցուի թէ ԺԱ. դարուն Լատինները Բողոքողները գեղեցկացուցին, առանց էական փոփոխութեան. արեւելքէն անոր կցեցին ճոխապէս զարդարուն հռոմէական եկեղեցի մը, Գողգոթան, Պատանատեղին, Գիւտիսաչի մուտքը եւ Ս. Պարտէզին արեւելքը զտնուող նոյն իսկ փոքր արդադիր աղօթարանները մէկ յարկի տակ առին, կանգնեցին զանգակատուն մը. խաչակրաց զորքը մեծագոյն մասամբ այս կերպով կատարուեցաւ, այնպէս որ մինչեւ հիմակ նոյնը մնացած է, թէն քիչ մը կերպարանափոխուած: Խաչակրաց ժամանակ այլեւս Գողգոթան ուրոյն չէնք մը չէր, այլ միացած էր իր յարակից մասերով Ս. Յարութեան տաճարին. ուղեգիրներու նկարագրութենէն կը հասկցուի թէ Գողգոթայի մատուռը ունէր չորս կամարներ լայնշի սիւններու վրայ հաստատուած. կեդրոնի սիւնը՝ առանցքը բոլոր կառուցուածքին, չէնքը կը բաժնէր երկու որոշ մասերու: Գողգոթայի սիւններուն, պատերուն և կամարներուն զարդարանքները միշտ աչքի կը զարնէին, ինչպէս առաստաղին, նոյնպէս յատակին վրայ գեղեցիկ նկարներ ուխտաւորաց ուշադրութեան առարկայ եղած են:

1187 ին երբ Խաչակիրները ստիպուեցան թողուլ Երուսաղէմը և Սալահէտտինի յաղթական բանակները գրաւեցին Ս. Երկիրը, Գողգոթայի եկեղեցին էր այն ինչ որ մենք կը տեսնենք այսօր, քիչ փոփոխութեամբ: Որպէս զի կարենանք մէջ բերել Գողգոթայի եկեղեցիին հայկական յիշատակները, հարկ կ'ըլլայ ճշգրէտ նոյն եկեղեցիին սեպհականութիւնը: Յայտնի կ'երևի թէ աւելի կանուխէն, ինչպէս արաբական տիրապետութեան, նոյնպէս խաչակրաց ժամանակ տէրունական սրբավայրերը ընդհանուր քրիստոնէութեան պատկանող վայրեր էին. պաշտամունք և արարողութիւնք ամէն քրիստոնեայ ազգեր ընկերակցաբար կամ առանձնաբար կը կատարէին որոշ ժամանակներու մէջ, ինչպէս յայտնի կ'ըլլայ հին դարերէ ժառանգուած սաղիմական տօնացոյցներէ և ծիսարարներէ: Բայց պատմական ապացոյցներ մեզ կը փաստեն Դըննցի իսլամ յաղթականին տիրապետութեան օրերէն Տնօրինական ինչ ինչ սրբավայրեր մասնաւոր ուղեգրու սեպհականութիւն կը դառնան, որպիսին է Գողգոթան՝ որ հայ ազգին օրինական և դարաւոր մէկ հաստատութիւնն էր, ինչպէս ստորեւ պիտի կարողանանք պարզել: Նախկին դարերու մեր մա-